ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆՎԱՐԴ ՎԱՉԳԵՆԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՑՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՁԻ ԽԱՌՆՎԱԾՔԻ ՏԻՊՈՎ, ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇԵՇՏՎԱԾՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

ԺԹ.00.05. - «ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ (ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ՏԱՐԻՔԱՅԻՆ, ՀԱՏՈՒԿ)» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ- 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվանհայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Սուրենի Խուդոյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վլադիմիր Սևանի Կարապետյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Հասմիկ Սոսի Հարությունյան**

Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ. նոյեմբերի 11-ին՝ ժամը 12.00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2014թ-ի հոկտեմբերի 10-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Կ.Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը - Դեռահասությունը դժվար տարիք է համարվում դեռևս Ժան-Ժակ Ռուսսոյի ժամանակներից: Այս տարիքում են հիմնականում սկսում առաջին անգամ ի հայտ գալ անձի սոցիոփաթիկ միտումները, փսիխոպաթիաները, հոգեկան հիվանդությունները(է. Կրեչմեր, Ա. Ֆրոյդ, է. Էրիքսոն, և ուրիշներ), երեխաները դառնում են անկառավարելի, սրվում են հարաբերությունները ծնողների և ուսուցիչների հետ(Ս. Հոլ, Լ. Ս. Վիգոտսկի, Դ. Բ. Էլկոնին, Լ. Ի. Բոժովիչ և ուրիշներ): Վերոնշյալ խնդիրները հիմնականում պայմանավորված են լինում դեռահասության ճգնաժամով: Այս ճգնաժամին անդրադարձել են բազմաթիվ խոշոր գիտնականներ՝ է. Շպրանգերը, Շ. Բյուլերը, Կ. Լևինը, Մ. Միդը, Ա. Ֆրոյդը, է. Էրիքսոնը, Լ. Ս. Վիգոտսկի, Դ. Բ. Էլկոնինը և շատ ու շատ ուրիշներ: Քննվել են այս ճգնաժամի ամենատարբեր կողմերը՝ պատճառները(Ա. Ֆրոյդ, Լ. Ս Վիգոտսկի, Լ. Ի. Բոժովիչ, Ս. Խուդոյան, և ուրիշներ), հոգեբանական մեխանիզմները(Կ. Ն. Պոլիվանովա և ուրիշներ), ճգնաժամային ախտանշանների համալիրը, նորագոյացությունները, որ ձևավորվում են այս ճգնաժամի ընթացքում (Լ. Ս Վիգոտսկի, է. Էրիքսոն, և ուրիշներ), դեռահասության ճգնաժամի ընթացքը տարբեր մշակույթներում (Ռ. Բենեդիկտ, Մ. Միդ և ուրիշներ), դաստիարակության դերը ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունների հարցում(Ս. Խուդոյան): Կան նաև այս ճգնաժամի հետ կապված մի շարք կարևոր հարցեր, որոնք գրեթե հետազոտված չեն: Այդ հարցերից է անձի անհատական առանձնահատոկությունների դերը ճգնաժամի ընթացքի հարցում: Այս հիմնախնդրի հատուկ տեսաէմպիրիկ հետազոտություններ դեռևս չեն կատարվել: Մինչդեռ ճգնաժամերի հիմնախնդրի այս ասպեկտը նույնպես հրատապ է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական տեսանկյուններից: Տեսական առումով հիմնախնդրի հետազոտությունը հնարավորություն կտա ավելի լավ հասկանալ ճգնաժամերի ընթացքի և հնարավոր ելքերի զանազան տարբերակները պայմանավորող ներհոգեկան գործոնները: Կիրառական տեսանկյունից այս հիմնախնդրի հետազոտությունը հրատապ է այն առումով, որ պրակտիկ աշխատողին հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ, թե ինչու է տվյալ անձի մոտ դեռահասության ճգնաժամն ընթանում նման ձևով, կանխատեսել, թե ինչ ընթացք կունենա ճգնաժամը և, ըստ այդմ, կազմակերպել հոգեբանական աշխատանքները՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:

Հետազոտության օբյեկտը դեռահասության ճգնաժամի ընթացքի առանձնահատկություններն են:

Հետազոտության առարկան - անձի խառնվածքի, բնավորության շեշտվածության ու ինտելեկտի ազդեցությունը դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա:

Հետազոտության նպատակը - Պարզել, թե ինչ ազդեցություն է ունենում անձի խառնվածքի տիպը, բնավորության շեշտվածությունը և ընդհանուր ինտելեկտի մակարդակը դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա:

Հետազոտության ընդհանուր վարկածը – խառնվածքի, բնավորության և' ինտելեկտի առանձնահատկությունները կարևոր դեր են խաղում դեռահասության ճգնաժամի ախտանշանների ինչպես բովանդակության, այնպես էլ սրման գործում:

Վարկածի մասնավոր դրույթներն են. ա/ դեռահասության ճգնաժամի սուր

ընթացքին բնորոշ են նեյրոտիզմի և էքստրավերսիայի բարձր ցուցանիշները, խոլերիկ, մելանխոխոլերիկ և խոլերոսանգվինիկ(ըստ Գ.Վ. Սուխոդոլսկու) խառնվածքի տիպերը, ինտրովերսիայի և փսիխոտիզմի թույլ են արտահայտվածությունը, բ/ ճգնաժամի միջին և մեղմ ընթացք ունեցող դեռահասների ճնշող մեծամասնությունը բիվերտներ են, երկրորդ տեղում է էքստրավերսիան. նեյրոտիզմը և փսիխոտիզմը երկու դեպքում էլ թույլ են դրսևորվում, գ/ ճգնաժամի միջին ընթացք ունեցող դեռահասներին ամենաբնորոշը սանգվոֆլեգմատիկ խառնվածքն է (ըստ Գ.Վ. Սուխոդոլսկու), դ/ ճգնաժամի մեղմ ընթացքունեցող դեռահասներին ամենաբնորոշը այսպես կոչված նորմալ(որևէ շեշտվածություն չունեցող) խառնվածքն է (ըստ Գ.Վ. Սուխոդոլսկու), ե/ դեռահասության ճգնաժամի սուր և միջին ընթացքունեցող դեռահասներին բնորոշ են՝ վառ արտահայտված շեշտվածությունը, երկու շեշտվածությունը, շեշտվածության բռնկուն տիպը (ըստ Կ. Լեոնհարդի), զ/ դեռահասության ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող դեռահասներին բնորոշ են՝ վառ արտահայտված շեշտվածությունը, մեկ շեշտվածությունը և տագնապային տիպը, է/ դեռահասության ճգնաժամի սուր ընթացքին բնորոշ է ինտելեկտի միջինից ցածր մակարդակը, ը/ դեռահասության ճգնաժամի միջին և մեղմ ընթացք ունեցող դեռահասներին բնորոշ է ինտելեկտի միջին մակարդակը:

Հետազոտության խնդիրները

1. Վերլուծության ենթարկել թեմայի հետ առնչվող գրականությունը՝ պարզելու հիմնախնդրի մշակվածության մակարդակը և հետագա հետազոտությունների հեռանկարները:
2. Պարզել, թե հատկապես որ անհատական բնութագրերն են, որ կարող են ազդեցություն ունենալ դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա:
3. Էմպիրիկ հետազոտության ենթարկել խառնվածքի տարբեր տիպերի պատկանող դեռահասների ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները:
4. Էմպիրիկ հետազոտության ենթարկել դեռահասների բնավորության շեշտվածության և ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները:
5. Էմպիրիկ հետազոտության ենթարկել ինտելեկտի տարբեր մակարդակ ունեցող դեռահասների ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները:

Հետազոտության մեթոդոլոգիական և տեսական հիմքերը – Մեր հետազոտությունը հիմնվում է անհատական մոտեցման սկզբունքի վրա, ինչից ելնելով գտնում ենք, որ անձի անհատականությունն է մեծապես պայմանավորում դեռահասության ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները:

Մեր հետազոտությունը հիմնվում է համակարգայնության սկզբունքի վրա. զարգացման ճգնաժամի ընթացքը պայմանավորված է ոչ թե մեկ գործոնով, այլ գործոնների համակարգով, որոնցից յուրաքանչյուրն իր տեղն ու դերն ունի այդ գործընթացում: Մեր հետազոտությամբ փորձում ենք պարզել, թե անձի խառնվածքի և ինտելեկտի առանձնահատկություններն ինչ դեր են խաղում ճգնաժամի ընթացքը պայմանավորող գործոնների համակարգում:

Հետազոտության տեսական հիմքն են կազմում խառնվածքի տիպի և անձի հոգեբանական պրոբլեմների, սթրեսների կապի մասին է. Կրեչմերի, Ու. Շելդոնի

տեսությունները, Հ. Այզենկի ընդհանուր ինտելեկտի կոնցեպցիան, Կ. Լեոնհարդի բնավորության շեշտվածությունների կոնցեպցիան, Ս. Խուդոյանի անձի բնութագրերի և զարգացման ճգնաժամերի ընթացքի առանձնահատկությունների մասին գաղափարները:

Հետազոտության մեթոդները – հետազոտության ընթացքում կիրառվել են զրույցի և հարցման մեթոդները, Մ. Լյուշերի 8-գունային թեստը, Հ. Այզենկի խառնվածքի որոշման համար նախատեսված թեստը, Կ. Լեոնհարդի բնավորության շեշտվածության ուսումնասիրության հարցարանը, Ռավենի ինտելեկտի թեստը:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Դեռահասության ճգնաժամի ընթացքը պայմանավորված է ոչ միայն արտաքին հանգամանքներով, այլև անձի անհատական առանձնահատկություններով:
2. Դեռահասության ճգնաժամի սուր ընթացքին նպաստում են խառնվածքի այնպիսի բնութագրեր ինչպիսիք են նեյրոտիզմը և էքստրավերսիան, դրանց վառ արտահայտվածությունը, ինչպես նաև խոլերիկ, մելանխոլերիկ և խոլերոսանգվինիկ(ըստ Գ.Վ. Սուխոդոլսկու) խառնվածքի տիպերը:
3. Ճգնաժամի միջին և մեղմ ընթացքն ավելի հաճախ դրսևորվում է բիվերտների մեջ:
4. Ճգնաժամի միջին ընթացք ունեցող դեռահասներին բնորոշ է սանգվոֆլեգմատիկ խառնվածքն է (ըստ Գ.Վ. Սուխոդոլսկու), իսկ մեղմ ընթացքին՝ նորմալ, այսինքն շեշտվածություն չունեցող խառնվածքը (ըստ Գ.Վ. Սուխոդոլսկու):
5. Բնավորության վառ արտահայտված շեշտվածությունը, երկու շեշտվածությունները և շեշտվածության բռնկուն տիպը նպաստում են դեռահասության ճգնաժամի ընթացքի սրմանը:
6. Ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող դեռահասներին բնորոշ է բնավորության մեկ շեշտվածությունը և տագնապայնության բարձր մակարդակը:
7. Դեռահասության ճգնաժամի սուր ընթացքին բնորոշ է ինտելեկտի միջինից ցածր մակարդակը: Ճգնաժամի միջին և մեղմ ընթացքին բնորոշ է միջին ինտելեկտը:

Հետազոտության գիտական նորույթը և տեսական նշանակությունը- Հետազոտության մեջ ցույց է տրվում, որ դեռահասության ճգնաժամի ընթացքում մեզանում գրեթե չեն հանդիպում հոգեախտաբանական բնույթի այնպիսի ախտանշաններ, ինչպիսիք են դեպերսոնալիզացիան, դեռեալիզացիան, դիսմորֆոֆոբիան, որոնք ավանդաբար համարվել են դեռահասության ճգնաժամի բնորոշ ախտանշաններ(Հ. Ռեմշմիդտ և ուրիշներ): Հիմնավորվում է, որ անձի խառնվածքի, բնավորության շեշտվածության և ինտելեկտի առանձնահատկությունները որոշակի ազդեցություն են ունենում դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա: Բացահայտվել է, որ դեռահասության ճգնաժամի սրմանը նպաստում են նեյրոտիզմի և էքստրավերսիայի բարձր մակարդակները, խոլերիկ, մելանխոլերիկ և խոլերոսանգվինիկ(ըստ Գ.Վ. Սուխոդոլսկու) խառնվածքի տիպերը, բնավորության երկու շեշտվածությունների առկայությունը, շեշտվածության բռնկուն տիպը, ինտելեկտի միջինից ցածր մակարդակը: Ճգնաժամի միջին ընթացքն ավելի հաճախ դրսևորվում է բիվերտների,

սանգվոֆլեգմատիկ խառնվածք երկու շեշտվածություն, ինտելեկտի միջին մակարդակ ունեցողների մեջ: Ճգնաժամի մեղմ ընթացքին բնորոշ է նորմալ խառնվա, բնավորությանմեկ շեշտվածությունը, միջին մակարդակի ինտելեկտը:

Հետազոտության գործնական նշանակությունը- Հետազոտությանարդյունքները կարող են օգտագործվել հոգեբանների, մանկավարժների և հոգեբույժների կողմից դեռահասության ճգնաժամի ընթացքի ախտորոշման, դեռահասների անձի հետազոտության և նրանց հետ հոգեբանամանկավարժական աշխատանքների ընթանցքում: Հետազոտության մեջ բացահայված փաստերը կարող են ընդգրկվել զարգացման հոգեբանության, դեռահասության ճգնաժամին նվիրված դասընթացներում:

Ատենախոսության փորձաքննությունը- Հետազոտության արդյունքները ներկայացվել և քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի նիստերին, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «Բանակ և հասարակություն. փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի արդիական հիմնախնդիրները» կոնֆերանսի ընթացքում:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը- ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից(104 անուն) և հավելվածից, ծավալը 142 էջ է: Ատենախոսության մեջ ներկայացված են 17 հիստոգրամ, երեք աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հիմնախնդրի հետազոտվածության մակարդակը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, մեթոդաբանական և տեսական հիմքերը, պաշտպանության ներկայացվող դրույթները:Ատենախոսության առաջին գլուխը՝ «Դեռահասության ճգնաժամի հիմնախնդիրը և անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սթրեսների ապրման գործընթացում», նվիրված է հիմնախնդրին առընչվող գրականության վերլուծությանը: Այս գլխի առաջին պարագրաֆումվերլուծության են ենթարկվում դեռահասության տարիքի հոգեբանական նորագոյացությունները, ես-համակարգի վերակառուցումները (Փ. Բլոս, Ա. Ա. Ռեան, Ե.Ի. Պետանովա, Ս. Խուդոյան), ակտուալ պահանջմունքները, պաշտպանական մեխանիզմները (Աննա Ֆրոյդ) և այլն: Հաջորդ պարագրաֆը նվիրված է դեռահասության ճգնաժամերի տեսությունների և էմպիրիկ հետազոտությունների վերլուծությանը: Ներկայացվում են Ս. Հոլի, Շ. Բյուլերի, է. Շպրանգերի, Ա. Ֆրոյդի, է. Էրիքսոնի, Փ. Բլոսի, Զ. Էլդերի, Ռ. Հավիգուրսթի, Լ. Ս. Վիգոտսկու, Լ. Ի. Բոժովիչի, Կ. Ն. Պոլիվանովայի, Ս. Խուդոյանի և այլոց տեսությունները:Չնայած մոտեցումների տարբերություններին, այնուամենայնիվ բոլոր տեսություններում էլ ընդգծվում է սեռական հասունացման, ինքնագիտակցության արթնացման դերն այս ճգնաժամի առաջացման գործում: Էմպիրիկ հետազոտությունները հիմնականում նվիրված են դեռահասության տարիքում ինքնագնահատականի(Ի. Մ. Վերենիկինա), մարմնի պատկերի, ես-

համակարգի (Յ. Դյուսեկ, Դ. Ֆլահերթի, Ռ. Սիմոնս) առանձնահատկություններին և դինամիկային, ագրեսիվ վարքին, միջանձնային հարաբերություններին և այլն: Առաջին գլխի երրորդ պարագրաֆում ներկայացվում են անձի հոգեբանական առանձնահատկությունների և սթրեսներին տրվող հակազդումների, հիվանդությունների փոխհարաբերության հիմնախնդրին նվիրված հետազոտությունները:Դեռևս հին հնդկական բժշկական համակարգում՝ այուրվեդայում, ընդունված է եղել այն տեսակետը, որ ինչպես հիվանդությունների առաջացումը այնպես էլ ընթացքը պայմանավորված են հոգեբանական անհատական առանձնահատկություններով: Ըստ Հիպոկրատեսի, խառնվածքի տիպով են որոշվում սթրեսի ապրման առանձնահատկությունները: Ավելի ուշ է. Կրեչմերը և նրա հետևորդները սթրեսներին տրվող հակազդումների և հիվանդությունների առաջացման գործում կարևորեցին մարմնակազմվածքի և դրա հիման վրա ձևավորված անձի հոգեբանական տիպի դերը: Այս պարագրաֆի առաջին ենթապարագրաֆում ներկայացվում են բնավորության տիպի, սթրեսների ապրման և հիվանդությունների փոխահարաբերության հետազոտությունները: Այստեղ նախ ներկայացվում են բնավորության հայտնի տիպաբանությունները (Զ. Ֆրոյդը, Օ. Ռանկը, էդ. Շպրանգերը, է. Ֆրոմը, Կ. Հորնին, Կ. Լեոնհարդը և ուրիշներ), ապա այն տիպաբանությունները կամ բնավորության գծերի համալիրները, որոնք մշակվել են անձնային հատկությունների և հիվանդությունների միջև առկա կապերի հետազոտության արդյունքում(ասենք, բնավորության Ա և Բ տիպերը): Այս պարագրաֆի երրորդ ենթապարագրաֆում քննվում են անձի կոգնիտիվ ոլորտի և սթրեսներին տրվող հակազդումների կապին նվիրված հետազոտությունները: Կոգնիտիվ հոգեբանության և հոգեթերապիայի մեջ սթրեսներին հակազդելու, սթրեսները հաղթահարելու առանձնահատկությունները կապվում են այսպես կոչված կոգնիտիվ ոճերի հետ, սակայն, պետք է ասել, որ այս ոլորտում էմպիրիկ հետազոտությունները շատ քիչ են: Այդ հազվադեպ հետազոտություններից կարելի է նշել Ռ. Գարդների և համահեղինակների հետազոտությունը, որը ցույց տվեց, որ ֆոկուսավորող ոճի կրողները սթրեսային իրավիճակում կիրառում են ժխտման և ճնշման պաշտպանական մեխանիզմները, իսկ լայն սկանավորողները հակված են իրավիճակը գնահատելիս օբյեկտիվ փաստերի վրա հիմնվել: Դ. Բաթեի հետազոտությունները ցույց տվեցին, որ կապ կա ինտելեկտի ցածր մակարդակի և սրտանոթային հիվանդությունների և ընդհանուր մահացության միջև:Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Դեռահասության ճգնաժամի ընթացքը պայմանավորող հիմնական հոգեբանական գործոնները», նվիրված է դեռահասության ճգնաժամի ընթացքը պայմանավորող արտաքին և ներհոգեկան գործոնների հետազոտություններին, ինչպես նաև ատենախոսության տեսական հիմքերի, էմպիրիկական հետազոտությունների տրամաբանության և մեթոդների ներկայացմանը: Առաջին պարագրաֆում քննվում են դեռահասության ճգնաժամի ընթացքը պայմանավորող արտաքին գործոնների, մասնավորապես դաստիարակության, հետազոտությունները: Ապա հիմնավորվում է, որ զարգացման ճգնաժամերի ընթացքը պայմանավորված են ոչ միայն արտաքին, այլև ներքին մի շարք հանգամանքներով՝ անձի խառնվածքի, բնավորության, ինտելեկտի և այլ բնութագրերի առանձնահատկություններով: Այս ոլորտը ժամանակակից հոգեբանության մեջ գրեթե հետազոտված չէ: Հազվադեպ

հետազոտություններից է Ս. Խուդոյանի զարգացման ճգնաժամերին նվիրված աշխատությունը, որի մեջ հեղինակը նշում է նաև, որ ճգնաժամերը սրված ձևով են հանդես գալիս բնավորության շեշտվածություն (հիստերոիդ, փսիխասթենիկ և այլն) և փսիխոպաթիա ունեցող անձանց մեջ: Ըստ մեզ, ներհոգեկան գործոնները կարևոր դեր են խաղում զարգացման ճգնաժամերի ընթացքի գործում: Բնականաբար ներքին տարբեր գործոններն ունեն իրենց առանձնահատկությունները և նույն ազդեցությունը չեն ունենում ճգնաժամի ընթացքի վրա: Նախ, որոշ ներհոգեկան բնութագրեր, ինչպիսիք են օրինակ՝ բնավորությունը, կոգնիտիվ ոճերը՝տարիքային առումով ավելի ուշ են ձևավորվում, բյուրեղանում: Դրանք երկրորդային բնույթ են կրում, այսինքն ձևավորվում են ներհոգեկան այլ գործոնների ազդեցությամբ կամ առավելապես արտաքին ներգործությունների արդյունք են:Առավելապես առանգական և հարաբերականորեն կայուն են այնպիսի ներհոգեկան գործոններ, ինչպիսիք են խառնվածքը և ընդհանուր ինտելեկտի մակարդակը: Հաշվի առնելով այս հանգամանքը, մենք գտնում ենք, որ անձի զարգացման ճգնաժամերի ընթացքի առանձնահատկությունները պայմանավորող ներքին գործոններից առավել կարևոր և նշանակալի դեր ունեն հենց խառնվածքն ու ինտելեկտը: Նախ, սրանք այսպես ասած առաջնային անհատական բնութագրեր են, որոնց հիմքի վրա են ձևավորվում մյուս բնութագրերը, ասենք, բնավորությունը կամ կոգնիտիվ ոճերը: Հետևաբար վերջիններիս մեջ առաջնային բնութագրերն առկա են և այսպես թե այնպես իրենց ազդեցությունն ունեն ճգնաժամերի ընթացքի վրա: Բացի այդ, առաջնային բնութագրերն ավելի կայուն են և քիչ են կախված արտաքին ներգործությունների ազդեցությունից, ինչը, ըստ մեզ, հնարավորություն է տալիս ավելի «մաքուր» ձևով հետազոտել ներանձնային գործոնների ադեցությունը ճգնաժամերի վրա: Եվ վերջապես առաջնային բնութագրերը դեռահասության տարիքում արդեն ձևավորված են, իսկ երկրորդայինները՝դեռ ձևավորման գործընթացում են:Նշված տրամաբանությունից ելնելով՝ մենք եզրակացրել ենք, որ դեռահասության ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները պայմանավորող ներքին գործոններից խառնվածքը և ընդհանուր ինտելեկտը առաջնային և արտաքին ներգործություններից հարաբերականորեն անկախ գործոններ են, որոնք կարող են որոշակի ազդեցություն ունենալ ճգնաժամի ընթացքի վրա: Այս գլխի երրորդ պարագրաֆում քննվում են հետազոտության հետ կապված տեսական հարցերը: Նախ, ճշգրտվում է «ճգնաժամի ընթացքի առանձնահատկություններ» հասկացությունը: Ցանկացած գործընթաց, այդ թվում նաև զարգացման ճգնաժամերը, ունեն ինչպես քանակական, այնպես էլ որակական բնութագրեր: Ճգնաժամերի քանակական բնութագրերից են ինտենսիվությունը, տևողությունը, որակական բնութագրերից են, ըստ մեզ, զարգացման ճգնաժամով պայմանավորված ապրումների, վարքի, միջանձնային հարաբերությունների, ճգնաժամի հաղթահարմանն ուղղված ակտիվության առանձնահատկությունները: Հոգեբանական գրականության մեջ ճգնաժամերի տևողության հիմնահարցը գրեթե հետազոտված չի: Ինչ վերաբերում է ճգնաժամերի ինտենսիվությանը, ապա այն, ըստ մեզ, առավելապես պայմանավորված է ոչ թե զարգացման ներքին օրինաչափություններով, այլ արտաքին և ներհոգեկան գործոնների առանձնահատկություններով, ինչն էլ հիմք է տալիս քանակական հենց այս բնութագիրը պայմանավորող անձնային հատկությունները հետազոտության

ենթարկել: Ներքին հոգեբանական առանձնահատկությունները, ըստ մեզ, կարևոր դեր են խաղում նաև ճգնաժամի որակական դրսևորումների մեջ:

Այս պարագրաֆի վերջում կոնկրետացվում են էմպիրիկ հետազոտության խնդիրները, այն է՝ պարզել, թե ա) ի՞նչ դեր է խաղում խառնվածքի տիպը դեռահասության ճգնաժամի ընթացքի սրման գործում, բ) նպաստու՞մ է արդյոք դեռահասության ճգնաժամի սրմանը ինտելեկտի մակարդակը, գ) ի՞նչ ազդեցություն է ունենում բնավորության շեշտվածությունը դեռահասության ճգնաժամի ընթացքի վրա: Էմպիրիկ հետազոտության տրամաբանությունը հետևյալն է. նախ մենք դասակարգել ենք դեռահասներին ըստ ճգնաժամի ընթացքի սրության (կիրառվել են, զրույցի, հարցման, Մ. Լյուշերի գունային թեստը): Ապա պարզել ենք յուրաքանչյուր խմբին պատկանող երեխաների խառնվածքի և ինտելեկտի առանձ-նահատկությունները, ինչից հետո որոշել ենք, թե կա՞ արդյոք կապ վերջիններիս և ճգնաժամի ընթացքի միջև: Կիրառվել են Հ.Այզենկի, Ռավենի ինտելեկտի թեստերը: Մենք նպատակահարմար համարեցինք պարզել նաև դեռահասների բնավորության շեշտվածության կապը ճգնաժամի ընթացքի հետ: Այդ նպատակով կիրառել ենք Կ. Լեոնհարդի բնավորության ակցենտուացիայի որոշման մեթոդիկան:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Դեռահասների անհատական առանձ-նահատկությունների և այս տարիքի ճգնաժամի ընթացքի փոխհարաբերության էմպիրիկ հետազոտություն», ներկայացվում են էմպիրիկ հետազոտության նպատակը, խնդիրները, փուլերը, մեթոդները, անցկացման տեղը, թվականը, ընտրանքը: Էմպիրիկ հետազոտություններն իրականացվել են 2012 թվականին Երևանի թիվ 38 և 127 հանրակրթական դպրոցներում: Հետազոտությանը մասնակցել են 13-15 տարեկան (հանրակրթական դպրոցի 7-9 դասարանները) 124 դեռահաս (68 տղա, 56 աղջիկ): Հետազոտության մեջ ընդգրկվել է նաև 26 ուսուցիչ: Հետազոտությունն իրականացվել է երեք **փուլերով**: **Առաջին փուլում** իրականացրել ենք դեռահասության ճգնաժամի ընթացքի բնութագրերի ախտորոշում: Այդ նպատակով իրականացրել ենք զրույց ուսուցիչների հետ՝ պարզելու, թե որ տարիքից են նրանք իրենց աշակերտների մեջ դեռահասության ճգնաժամին բնորոշ ախտանշաններ նկատել և ինչ ընթացք ունի ճգնաժամը, ինչպես նաև դեռահասների հետ՝ պարզելու, թե նրանք ինչպես են գնահատում ճգնաժամի ընթաացքը: Ճգնաժամի ընթացքի առանձնահատկությունները հետազոտելու համար կիրառել ենք նաև հարցման, Մ. Լյուշերի գունային թեստը: **Երկրորդ փուլում** հետազոտության ենք ենթարկել ճգնաժամի տարբեր ընթացք (սրություն) ունեցող դեռահասների խառնվածքի, բնավորության շեշտվածության և ինտելեկտի առանձնահատկությունները: Կիրառվել են Հ. Այզենկի խառնվածքի որոշման համար նախատեսված թեստը, Կ. Լեոնհարդի բնավորության շեշտվածության ուսումնասիրության հարցարանը, Ռավենի ինտելեկտի թեստը: **Երրորդ փուլում** հետազոտության են ենթարկվել դեռահասության ճգնաժամի ընթացքի սրության և անձնային բնութագրերի միջև առկա կապերը: Էմպիրիկ հետզոտությունների առջին փուլում իրականացրել ենք զրույց ուսուցիչների հետ: Զրույցի նպատակն էր տարբերակել դեռահասության ճգնաժամի մեջ գտնվող երեխաներին և պարզել ճգնաժամային ախտանշանների դրսևորման սրությունը: Հետազոտությունն իրականացվել է. Երևանի 38, 127 հանրակրթական դպրոցների 7-9-րդ դասարանների 26 ուսուցիչների (հիմնականում դասղեկների) հետ:

Զրույցներն իրականացվել են դպրոցում, անհատապես: Հետազոտվողներին տրվել են հետևյալ բնույթի հարցեր. նկատել եք արդյո՞ք վերջին շրջանում Ձեր սաների մեջ տարիքային կտրուկ փոփոխություններ վարքում, Ձեր և իրար հետ հարաբերություններում: Կարո՞ղ եք նշել տվյալ դասարանում այն աշակերտներին, ումմեջ նկատում եք փոփոխություններ և նրանց ումմեջ չկան փոփոխություններ: Կարո՞ղ եք, թե կոնկրետ ինչ փոփոխություններ են տեղիունեցել աշակերտների մեջ: Ի՞նչ փոփոխություններ են տեղիունեցել նրանց վարքում, հուզական ապրումներում, արտաքինում: Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել նրանց հասակակիցների և մեծերի հետ հարաբերություններում և այլն:

Զրույցի արդյունքները

Բոլոր ուսուցիչներն էլ նշում էին, որ 7-9-րդ դասարաններում (13-15 տարեկան, տասնամյա կրթության պարագայում՝ 6-8-րդ դասարաններ) դասարաններում կտրուկ փոփոխություններ են տեղի ունենում աշակերտների մոտ 80- 90% -ի մեջ: Փոխվում են և՛ արտաքինը և՛ վարքը և՛ հարաբերությունները մեծերի ու իրար հետ: Կտրուկ հասունացում է նկատվում: Ըստ որում, ուսուցիչներն ամենևին զուտ բացասական տեսանկյունից չէին գնահատում դեռահասության ճգնաժամը: Իհարկե, շատերն ավելի կոնֆլիկտային, մի տեսակ նյարդային են դառնում, բայց քիչ չեն նաև նրանք, ովքեր դեպի լավն են փոխվում, ավելի լավ են սկսում սովորել, ուսուցիչների հետ հարաբերություններն են լավանում, մի տեսակ լրջանում են, ավելի ուշադիր և պատասխանատու են դառնում: Բացասական փոփոխություններից ուսուցիչները նշում էին դասերից փախչելը, կոնֆլիկտները ուսուցիչների հետ, ընդհանուր ագրեսիվության աճը, լարվածությունը, անտարբերությունը դասերի նկատմամբ, ինքնամփոփությունը: Տղաների մի նշանակալի հատվածը սկսում է ծխել, ոմանք ալկոհոլ են սկսում օգտագործել: Մի շարք դեռահասների (հատկապես տղաների մեջ) վարքի մեջ ակնհայտ սոցախտաբանական շեղումներ են նկատվում: Ուսուցիչների հետ զրույցի հիման վրա առանձնացրել ենք դեռահասության ճգնաժամի շրջանում փոփոխությունների հետևյալ տեսակները՝ ա/ դրական փոփոխություններ(15%), բ/ բացասական փոփոխություններ (85%). ըստ որում բացասական փոփոխությունների երկու տեսակ ենք առանձնացրել՝ պասիվացմամբ(25%) և ակտիվացմամբ (60%) ուղեկցվող փոփոխություններ, գ/ ըստ ընթացքի սրության տարբերակել ենք մեղմ (մոտ 32%), միջին սրության(մոտ 18 %) և սուր ընթացք ունեցող ճգնաժամ (50%):

Դեռահասության ճգնաժամի ընթացքի հետազոտություն հարցման մեթոդով: Հետազոտությունն իրականացվել է 2012 թ. Երևանի թիվ 38, 127 հանրակրթական դպրոցների 8-10 դասարանների 124 աշակերտների հետ (68 տղա, 56 աղջիկ): Հարցման նպատակն էր պարզել, թե ինչ սրությամբ է (մեղմ, միջին սրության, սուր) ընթանում դեռահասության ճգնաժամը: Հարցումն իրականացվել է Ս. Խուդոյանի կողմից մշակված հարցարանով: Այն իրենից ներկայացնում է դեռահասության ճգնաժամի 20 հիմնական ախտանշանները բնութագրող պնդումներ, որոնց դրական պատասխանները վկայում են դեռահասների մեջ այդ ախտանշանների առկայության մասին: Դեռահասության ճգնաժամի սրության մասին կարելի է դատել դրական պատասխանների քանակով:

Հարցման արդյունքները և դրանց վերլուծությունը

Հարցման արդյունքները տարբերվեցին զրույցի արդյունքներից, ցույց տվեցին, որ Ճգնաժամի սուր ընթացքը առկա է հարցվածների 18%-ի մեջ(23 դեռահաս), մեղմ ընթացքեն դրսևորում աշակերտների 35%-ը(44 դեռահաս), իսկ մոտ 46%-ի մեջ Ճգնաժամի ընթացքը միջին սրության է(57 դեռահաս): Ըստ որում Ճգնաժամային ախտանշաններից մեր դեռահասներին առավել բնորոշ են. ա/ արտաքինի հետ կապված խնդիրները (հարցվածների 94%-ը), բ/ դժգոհությունը սեփական ես-ից (հարցվածների 88%-ը), գ/ վախերը (հարցվածների 75%-ը), դ/ կոնֆլիկտները ծնողների հետ (հարցվածների 68%-ը), ե/ միայնակության զգացումը(հարվածների 60%-ը), զ/ խնդիրները հասակակիցների հետ (հարցվածների 48%-ը), է/ մտորումներն այնպիսի հարցերի շուրջ ինչպիսիք են՝ «ո՞վ եմ ես», «ինչո՞ւ եմ ծնվել» (հարցվածների 46%-ը մտորում էր այնպիսի հարցերի շուրջ ինչպիսիք են՝ «ո՞վ եմ ես», «ինչո՞ւ եմ ծնվել», ը/ տխրությունը(հարցվածների 31%-ը), թ/ տագնապները կապված թվացյալ հիվանդությունների հետ (հարցվածների 17%-ը), ժ/ ուսուցիչների հետ վատ հարաբերությունները (հարցվածների 9%-ը), ի/ կպչուն մտքերը(հարցվածների 4%-ը):



Դեռահասության Ճգնաժամի ընթացքի սրության հետազոտություն Մ. Լյուշերի 8 գունային թեստի միջոցով

Թեստն անց է կացվել 124 դեռահասի՝ Երևանի թիվ 38 և 127 հանրակրթական դպրոցների 7-9(8-10) (68 տղա, 56 աղջիկ) աշակերտների հետ: Հետազոտությունն անց է կացվել նույն փորձարկվողների հետ: Մ.Լյուշերի թեստով հետազոտության ենթարկված 124 աշակերտները ըստ Ճգնաժամի ընթացքի սրության խմբավորվել են հետևյալ կերպ. առանձնացվել են սուր ընթացքի 28 դեպք (23 %-ը), որոնց բնորոշ է բարձր տագնապայնությունը, սոցիալական հարմարման դժվարությունները, բարձր է ֆրուստրացվածությունը, կոնֆլիկտայնությունը, հուսահատությունը և այլն:

Միջին սրության ընթացքի 62 դեպք է առանձնցվե(50%-ը): Նրանց մեջ տագնապայնությունն առկա է, սակայն բարձր չէ, առկա է որոշ ֆրուստվացվածություն, սակայն դիրքորոշումները լավատեսական են, ընդհանուր առմամբ հարմարված են միջավայրին: Առանձնացվել են մեղմ ճգնաժամային ընթացքի 34 (27%-ը) դեպք: Այսպիսով, դեռահասության ճգնաժամի ընթացքի սրության հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել դեռահասության ճգնաժամի երեք ընթացք՝ մեղմ, սուր և միջին սրության: Ըստ որում, նշված ընթացքների տոկոսային հարաբերությունը խիստ մոտ է այլ մեթոդներով կատարված հետազոտությունների արդյունքներին, ինչը մի կողմից թույլ է տալիս ենթադրել, որ Լյուշերի թեստով իրականացված հետազոտությունները հավաստի են, իսկ մյուս կողմից նշել, որ դեռահասության ճգնաժամը մեզանում սուր ընթացք է ունենում 20-25% դեռահասների մեջ, միջին սրությամբ է ընթանում 50-60%-ի մեջ և մեղմ է ընթանում նորից 20-25%-ի մեջ: Հետազոտության արդյունքների հավաստիությունը հետազոտելու նպատակով անց ենք կացրել զրույց 16 դեռահասների հետ, որոնք դրսևորել էին ճգնաժամի սուր(9 աշակերտ՝ 5 աղջիկ 4 տղա) և մեղմ(7 աշակերտ՝ 3 տղա, 4 աղջիկ) ընթացք: Զրույցի արդյունքները ցույց տվեցին, որ **ճգնաժամի սուր ընթացք ունեցող** դեռահասները որպես իրենց հիմնական պրոբլեմ նշում էին կոնֆլիկտները ծնողների և ուսուցիչների հետ: Միևնույն ժամանակ նորմալ չէին նաև հարաբերությունները հասակակիցների հետ: Ընտանիքում դաստիարակության ոճին բնորոշ էր հակասականությունը, կոշտ ավտորիտարիզմը: **Ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող** դեռահասներին բնորոշ էր հանգիստ բնավորությունը, հավասարակշռվածությունը: Հանդիպում էին և ինքնավստահ և անինքնավստահ դեռահասներ, սակայն ագրեսիվությունը և տագնապայնությունը նրանց մեջ բարձր չէր: Ամենատիպական բնութագիրը սեփական անձից դժգոհության խիստ ցածր մակարդակն էր: Այս դեռահասների ընտանեկան դաստիարակությանը բնորոշ էր չափավոր ավտորիտար կամ դեմոկրատական ոճի դաստիարակությունը:

Էմպիրիկ հետազոտությունների երկրորդ և երրորդ փուլերում մեր նպատակն էր՝ պարզել դեռահասության ճգնաժամի ընթացքի տարբեր սրություն ունեցող դեռահասների խառնվածքի, բնավորության շեշտվածության և ինտելեկտի առանձնահատկությունները: Կիրառվել են Հ. Այզենկի խառնվածքի որոշման թեստը, Կ. Լեոնհարդի բնավորության շեշտվածության ուսումնասիրության հարցարանը, ինտելեկտի մակարդակի որոշման համար կիրառել ենք Ռավենի ինտելեկտի թեստը: Հետազոտությունը իրականացվել է 2012 թ. Երևանի թիվ 38 և 127 հանրակրթական դպրոցների 7-9 (8-10) դասարանների 124 դեռահաս (68 տղա, 56 աղջիկ): Հետազոտվողները նույն դեռահասներն էին: Նրանցից յուրաքանչյուրը լրացրել էր վերոնշյալ թեստերը, որից հետո վերլուծության էր ենթարկվել նշված անհատական առանձնահատկությունների և դեռահասության ճգնաժամի ընթացքի միջև առկա կապերը: Հ. Այզենկի թեստով հետազոտությունները ցույց տվեցին, որ հետազոտվողների 41%-ը (51 հարցված) միջին ցուցանիշներ էր հավաքել բոլոր սանդղակներով (էքստրավերսիա-ինտրովերսիա սանդղակով՝ բիվերտ էին), ակնհայտ էքստրավերտ էին (էքստրավերսիա-ինտրովերսիա սանդղակով հավաքել էին 16-ից ավել բալեր) հարցվածների 35%-ը (43 հարցված), ինտրովերսիան բարձր էր 24%-ի մեջ (30

հարցված): Նեյրոտիզմը բարձր էր 24 հետազոտվողի մեջ (ընդհանուր հարցվածների 19%-ի մեջ), հուզականորեն կայուն էին՝ 49 հետազոտվող (ընդհանուր հարցվածների 39%-ը): Փսիխոտիզմը բարձր էր 15 հարցվածի մեջ (ընդհանուր հարցվածների 12%-ի մեջ), ցածր էր 58 հարցվածի մեջ (ընդհանուր հարցվածների 46%-ը): Ըստ Գ.Վ. Սուխոդոլսկու խառնվածքի տիպաբանության հետազոտվածների 41%-ը (51 հարցված) նորմալ խառնվածք ունեն, սանգվինիկ էին (հուզականորեն կայուն էքստրավերտներ) հետազոտվածներից 17-ը (14%), 20-ը (16%)՝ խոլերոսանգվինիկ (նեյրոտիզմի միջին ցուցանիշներով էքստրավերտ), 6 (4%)՝ խոլերիկ (նեյրոտիզմ+էքստրավերսիա), մելանխոլիկ էին (ինտրովերսիա+նեյրոտիզմ) 6 դեռահաս (4%), մելանխոխոլերիկ (նեյրոտիզմ+բիվերտ) էին 12 դեռահաս(9%), ֆլեգմատոմելանխոլիկ էին(ինտրովերսիա+նեյրոտիզմի միջին բալեր) 17-ը (13%), ֆլեգմատիկ(հուզականորեն կայուն, ինտրովերտ) էին 7-ը(5%), սանգվոֆլեգմատիկ էին(կայուն, բիվերտ) 25 դեռահաս (20%):



Կ. Լեոնհարդի հարցարանով հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ բնավորության վառ արտահայտված շեշտվածություն (հավաքել էին 18-ից բարձր բալեր) ունեն հարցվողների 67%-ը (83 աշակերտ), որոնցից մեկից ավելի արտահայտված շեշտվածություն ունեին 51-ը (արտահայտված շեշտվածություն ունեցողների 61%-ը և բոլոր հարցվածների 41 %-ը)՝ վերջինների մեջ երկու արտահայտված շեշտվածություն ունեին 44-ը, այսինքն մեկից ավելի արտահայտված շեշտվածություն ունեցողների 86%-ը և հետազոտվողների ընդհանուր քանակի 35%-ը: Յոթ դեռահաս ուներ երեք արտահայտված շեշտվածություն (արտահայտված շեշտվածություն ունեցողների 13%-ը և հետազոտվողների ընդհանուր քանակի 6 %-ը): Չորս ընդգծված շեշտվածություն ունեցողներ չբացահայտվեցին: 21 դեռահասի մեջ բացահայտվեց միջին մակարդակի բնավորության շեշտվածություն (ընդհանուր հարցվածների 17%-ը), այսինքն նրանք հավաքել էին 12-18 բալ: 14 դեռահաս հավաքել էին 8-12 բալ (հարցվածների 11%-ը), այսինքն սահմանային վիճակում էին, իսկ 6 դեռահաս

(հարցվածների մոտ 5%-ը) հավաքել էին մինչև 8 բալ, այսինքն բացարձակապես չէին դրսևորել շեշտվածություն:

Զ. Ռավենի ինտելեկտի թեստով կատարված հետազոտությունները ցույց տվեցին, որ 124 աշակերտներից մեկի լրացրած թեստը անվավեր էր: Մնացած 123 դեռահասներից միայն երկուսը (երկուսն էլ տղա էին, 15 տարեկան) կարողացան հավաքել համապատասխանաբար՝ 57 և 58 բալ (0,01%), որոնք համապատասխանում են գերբարձր ինտելեկտի մակարդակին (տոկոսային արտահայտմամբ՝ 95% և 96%): Բարձր ինտելեկտ 75-95% (կամ 120 բալից բարձր ըստ ինտելեկտի գործակցի մակարդակի սանդղակի) էին դրսևորել հետազոտվողների 17 %-ը (21 դեռահաս), հետազոտվածների 59%-ը (73 դեռահաս), դրսևորել է միջին ինտելեկտ, մոտ 22 % -ը (27 դեռահաս)դրսևորեց միջինից ցածր ինտելեկտ (5-24%): Ինչպես նշել էինք վերևում, 1 դեռահաս 5%-ց ցածր էր հավաքել:Հետազոտությունների եզրափակիչ էտապում(երրորդ փուլում) մենք փորձել ենք պարզել, թե կա արդյո՞ք կապ դեռահասության ընթացքի սրության և դեռահասների վերոնշյալ անձնային բնութագրերի միջև: Այդ նպատակով մենք կապեր ենք փնտրել դեռահասության ճգնաժամի սուր, միջին սրության և մեղմ ընթացք դրսևորող դեռահասների խմբերում գերակշռող խառնվածքի այզենկյան բնութագրերի (էքստրավերսիա-ինտրովերսիա, նեյրոտիզմ, փսիխոտիզմ) և խառնվածքի տիպի (մելանխոլիկ, ֆլեգմատիկ, սանգվինիկ, խոլերիկ), բնավորության Կ. Լեոնհարդի առանձնացրած տիպերի և դրանց շեշտվածության, ինչպես նաև ինտելեկտի մակարդակների միջև:

Դեռահասության ճգնաժամի ընթացքի սրության և Հ. Այզենկի առանձնացրած խառնվածքի բնութագրերի և տիպերի հետ կապի հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ճգնաժամի սուր ընթացք դրսևորող դեռահասների մեջ (23 դեռահաս) ամենաբարձր խառնվածքային բնութագրերը էքստրավերսիան է (բիվերտ էին 7 դեռահաս)՝ 12 դեռահաս (52%) և նեյրոտիզմը՝ 13 դեռահաս (56 %): Ինտրովերսիան բնորոշ էր ընդամենը 4 դեռահասի (17%), նեյրոտիզմի միջին ցուցանիշները բնորոշ էին 8 դեռահասի (17%), իսկ հուզական կայունությունը՝ 2 դեռահասի (9%): Փսիխոտիզմը նույնպես բնորոշ չէր ճգնաժամի սուր ընթացք ունեցող դեռահասներին, այն դրսևորում էր ընդամենը 3 դեռահասի մեջ, իսկ 8-ի մեջ փսիխոտիզմը բացակայում էր: Դեռահասության ճգնաժամի միջին սրության ընթացք ունեցող դեռահասների մեջ (57 դեռահաս) գերակշռում էին՝ բիվերտները 23 դեռահաս (40%), երկրորդ տեղում էքստրավերտներն էին 19 դեռահաս (33%), իսկ 15-ը ինտրովերտ էին (26%): Նեյրոտիզմը բնորոշ էր 9 դեռահասի(15%), այս սանդղակովմիջին ցուցանիշներ էին դրսևորել 24(42%) դեռահաս, հուզականորեն կայուն էին 24-ը(42%): Փսիխոտիզմը բարձր էր 7 դեռահասի մեջ(12%), 23-ը(40%) միջին ցուցանիշներ էին դրսևորել, 27-ի մեջ (47%) այս բնութագիրը բացակայում էր: Ճգնաժամի մեղմ ընթացք դրսևորող դեռահասների մեջ (44 դեռահաս) նույնպես մեծ մասը բիվերտ էին՝ 21 անձ (47%), ինտրովերսիան 11 դեռահասի մեջ էր դրսևորվում (25%): Էքստրավերսիան բնորոշ էր 12 դեռահասի (27%): Նեյրոտիզմը բարձր էր 2 դեռահասի մեջ(4%), նեյրոտիզմի միջին ցուցանիշներ ունեին 19-ը(43%), հուզականորեն կայուն էին 23-ը(52%): Ըստ Գ.Վ. Սուխոդոլսկու խառնվածքի տիպաբանության ճգնաժամի սուր ընթացք դրսևորող 23 դեռահասներից 7-ին (30%) բնորոշ էր խոլերիկ խառնվածքը, խոլերոսանգվինիկ էին 5 դեռահաս (21%),

մելանխոխոլերիկ խառնվածքունեին 5(21%), մելանխոլիկ խառնվածքը բնորոշ էր 1 դեռահասի(4%), ֆլեգմատոմելանխոլիկ էին 3 դեռահաս(13%), սանգվոֆլեգմատիկ 2(8%): Ճգնաժամի միջին սրության ընթացք ունեցող դեռահասների մեջ (57 դեռահաս) սանգվոֆլեգմատիկ էին 12 դեռահաս(21%), այսպես կոչված նորմալ խառնվածք ունեցողները 8 դեռահաս էին(14%), խոլերոսանգվինիկ էին 8 դեռահաս(14%), ֆլեգմատոմելանխոլիկ էին՝ 8-ը(14%), սանգվինիկ էին 7 դեռահաս(12%), խոլերիկ՝ 6-ը(10%), ֆլեգմատիկ էին 5 դեռահաս(8%), խոլերիկ խառնվածքը բնորոշ էր 4 դեռահասի(7%), մելանխոխոլերիկ էին 3-ը (5%), մելանխոլիկ 2(3%): Ճգնաժամի մեղմ ընթացք դրսևորող 44 դեռահասների մեջ նորմալ խառնվածք ունեին 10 դեռահաս (23%), սանգվոֆլեգմատիկ էին 10-ը (23%), սանգվինիկ՝ 7-ը(16%), ֆլեգմատիկ՝ 6-ը(13%), խոլերոսանգվինիկ էին 5-ը(11%), ֆլեգմատոմելանխոլիկ՝ 4-ը (9%), մելանխոխոլերիկ էր 1-ը (2%), մելանխոլիկ՝ 1-ը (2%), խոլերիկ՝ 0: Դեռահասության ճգնաժամի ընթացքի սրության և Կ. Լեոնհարդի առանձնացրած շեշտված բնավորության տիպերի հետ կապի արդյունքները ցույց տվեցին, որ դեռահասության ճգնաժամի սուր ընթացք ունեցող անձանց (23 դեռահաս) շրջանում բնավորության վառ արտահայտված շեշտվածություն ունեին բոլոր հետազոտվածները (Կ. Լեոնհարդի թեստով հավաքել էին 18-ից բարձր բալեր): Նրանցից մեկից ավելի շեշտվածություն ունեին 16-ը(սուր ճգնաժամ ունեցողների 69%-ը), որոնցից երկու շեշտվածություն ունեին 14 դեռահաս, իսկ 2-ը(8%) ունեին երեք արտահայտված շեշտվածություն: Յուրաքանչյուր դեռահասի մեջ առկա էր բնավորության մեկ շեշտվածություն: Ամենատարածված շեշտվածությունն էր բռնկուն բնավորությունը՝ 10 (ճգնաժամի սուր ընթացք ունեցողների 43%-ը) դեռահաս: Երկրորդ տեղում հիպերտիմ տիպն էր՝ 5 դեռահաս (21%), երրորդում՝ ցուցադրական տիպը՝ 3 դեռահաս (13%), երկուական դեռահասներ ունեին ինտրոյեկտիվ (աֆեկտիվ-հուզավառ) և հուզական տիպեր (8%), մեկը՝ ցիկլոտիմիկ(4%): Ճգնաժամի միջին սրության ընթացք ունեցող դեռահասների (57 դեռահաս) մեջ բնավորության վառ արտահայտված շեշտվածություն ունեին 36 դեռահաս(63%), որոնցից երկու շեշտվածություն ունեին 19-ը(միջին սրության ընթացքունեցող դեռահասների ընդհանուր թվի 38%-ը), երեք շեշտվածություն՝ 5-ը(միջին սրության ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 12%-ը): Մեկ շեշտվածություն ունեին 12 դեռահաս(միջին սրության ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 21%-ը): 12 դեռահաս դրսևորեց բնավորության միջին մակարդակի շեշտվածություն(միջին սրության ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 26%-ը), սահմանային վիճակում էին՝ 5-ը(միջին սրության ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 8%-ը) և 4 դեռահասի մեջ շեշտվածություն չկար(միջին սրության ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 1%-ը): Ճգնաժամի միջին սրության ընթացք ունեցող, վառ արտահայտված շեշտվածությամբ դեռահասների մեջ առավել հաճախ հանդիպում էր բռնկուն բնավորությունը՝ 16 դեռահաս (միջին սրության ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 28%-ը), երկրորդ տեղում ցուցադրական տիպն էր՝ 8 դեռահաս (միջին սրության ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 14%-ը), 7 դեռահաս հիպերտիմ տիպին էր պատկանում (միջին սրության ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 12%-ը), երկու դեռահաս հուզական տիպին էր պատկանում(միջին սրության ընթացքունեցող դեռահասների ընդհանուր թվի 3%-

ը), մեկական դեռահասներ ունեին՝ դիստիմ, ցիկլոիդ և աֆեկտիվ-հուզավառ տիպերի բնավորության ընդգծված շեշտվածություններ: Բնավորության միջին մակարդակի շեշտվածություն ունեցողների մեջ նույնպես գերակշռում էին բռնկուն տիպին պատկանող դեռահասները՝ 6 դեռահաս (բնավորության միջին շեշտվածություն ունեցող դեռահասների 40%-ը): Ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող դեռահասների (44 դեռահաս) մեջ բնավորության ընդգծված շեշտվածություն ունեին 24 դեռահաս(54%-ը), որոնցից մեկ շեշտվածություն ունեին 15 դեռահաս(մեղմ ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 34%-ը), երկու ընդգծված շեշտվածություն ունեին 9 դեռահաս(մեղմ ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 20%-ը), երեք ընդգծված շեշտվածություն ոչ ոք չուներ: 9 դեռահաս դրսևորեց բնավորության միջին մակարդակի շեշտվածություն(միջին սրության ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 26%-ը), սահմանային վիճակում էին 9 դեռահաս(մեղմ ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի26%-ը), իսկ 2-ի մեջ շեշտվածությունը բացակայում էր: Ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող, վառ արտահայտված շեշտվածությամբ դեռահասների մեջ առավել հաճախ հանդիպում էր տագնապային տիպը՝ 9 դեռահաս (մեղմ ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 20%-ը), երկրորդ տեղում հուզական տիպն էր՝ 7 դեռահաս(մեղմ ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 16%-ը), երրորդում՝ դիստիմիկ տիպն էր՝ 4 դեռահաս(մեղմ ընթացք ունեցող դեռահասների ընդհանուր թվի 9%-ը), 2 դեռահաս հիպերտիմ էին և մեկական դեռահաս ունեին բռնկուն և պարանոյալ շեշտվածություն: Դեռահասության ճգնաժամի ընթացքի սրության և Ջ. Ռավենի ու Լ. Փենրոուզի թեստով հետազոտված դեռահասների ինտելեկտի հետ կապի հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ դեռահասության ճգնաժամի սուր ընթացք ունեցող դեռահասների (23 դեռահաս) մեջ ամենաշատը միջինից ցածր ինտելեկտ (5-24%) ունեցողներն էին (այդ թվում մեկ դեռահաս, որն ըստ էության գուշակելու ճանապարհով էր փորձել լուծել խնդիրները)՝ 11 անձ (սուր ճգնաժամ ապրող դեռահասների 47%-ը), երկրորդ տեղում միջին ինտելեկտ(25-74%) ունեցող դեռահասներն են՝ 10 անձ(սուր ճգնաժամ ապրող դեռահասների 43%-ը), 2 դեռահաս (սուր ճգնաժամ ապրող դեռահասների 8%-ը), ուներ բարձր ինտելեկտ (75-95%): Միջին սրության ճգնաժամ (57 դեռահաս) ունեցողների բացարձակ մեծամասնությունը՝ 37 դեռահաս, միջին ինտելեկտ (25-74%) էին դրսևորել (միջին սրության ճգնաժամ ունեցողների 64%-ը), բարձր ինտելեկտ էր դրսևորել 9 դեռահաս (միջին սրության ճգնաժամ ունեցողների 15%-ը), միջինից ցածր ինտելեկտ ունեին 9 դեռահաս (միջին սրության ճգնաժամ ունեցողների 15%-ը), գերբարձր ինտելեկտ (95 % և ավել) էր դրսևորել 2 դեռահաս: Ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող դեռահասների (44 դեռահաս) մեծամասնությունը նույնպես միջին ինտելեկտ էր դրսևորել 26 դեռահաս (Ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող դեռահասների 59%-ը), 10 դեռահաս ուներ բարձր ինտելեկտ(Ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող դեռահասների 22%-ը), ութ դեռահաս ունեին միջինից ցածր ինտելեկտ (Ճգնաժամի մեղմ ընթացք ունեցող դեռահասների 18%-ը):

Այսպիսով էմպիրիկ հետազոտությունների արդյունքները՝ վստահորեն կարելի է նշել, որ անձնային հատկությունները, մասնավորապես անձի խառնվածքը, ինտելեկտը և բնավորության շեշտվածությունը կարևոր դեր են խաղում դեռահասության ճգնաժամի ընթացքի գործընթացում:

ԵԶՐԱԿՈՒՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր տեսական և էմպիրիկ հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Զարգացման հոգեբանության մեջ խիստ թույլ են հետազոտված անձնային հատկությունների ազդեցությունը տարիքային ճգնաժամերի ընթացքի վրա, մինչդեռ դրանք պակաս կարևոր դեր չեն խաղում ճգնաժամերի սրման հարցում քան արտաքին ներգործությունները:
2. Կարելի է հստակորեն առանձնացնել դեռահասության ճգնաժամի ընթացքի երեք տարբերակ՝ մեղմ, սուր և միջին սրության: Դեեռահասության ճգնաժամը մեզանում սուր ընթացք է ունենում 20-25% դեռահասների մեջ, միջին սրությամբ է ընթանում 50-60%-ի մեջ և մեղմ է ընթանում նորից 20-25%-ի մեջ:
3. Մեզանում հազվադեպ են դեռահասության ճգնաժամի հոգեախտաբանական ախտանշանները, օրինակ՝ դեպերսոնալիզացիան, դեռեալիզացիան, դիսմորֆոֆոբիան, որոնք որոշ հեղինակներ բնորոշ են համարում դեռահասության ճգնաժամին:
4. Դեռահասության ճգնաժամի սուր ընթացքը մեծապես պայմանավորված է նևրոտիզմի և էքստրավերսիայի բարձր մակարդակներով, խոլերիկ, մելանխոխոլերիկ և խոլերոսանգվինիկխառնվածքի տիպերով, բնավորության երկու շեշտվածությունների առկայությամբ, շեշտվածության բռնկուն տիպով, ինտելեկտի միջինից ցածր մակարդակով:
5. Ճգնաժամի միջին ընթացքին նպաստում են բիվերսիան, սանգվոֆլեգմատիկ խառնվածքը, բնավորության երկու շեշտվածությունը, ինտելեկտի միջին մակարդակը:
6. Ճգնաժամի մեղմ ընթացքին բնորոշ է նորմալ խառնվածքը, բնավորության մեկ շեշտվածությունը, տագնապայնության բարձր մակարդակը, միջին մակարդակի ինտելեկտը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլվել է հրատարակված հետևյալ աշխատություններում՝

1. Արզումանյան Ն.Վ. Խուդոյան Ս. Ս. Խառնվածքի տիպերի և սթրեսներին տրվող հակազդումների փոխհարաբերության հիմնախնդիրը Հոգեբանությունը և կյանքը N 1-2, 2010թ, էջ 5-8:
2. Արզումանյան Ն.Վ.Զարգացման ճգնաժամերի ընթացքը պայմանավորող ներքին գործոնների հիմնախնդիրը .Հոգեբանությունը և կյանքը N 3-4,2010թ, էջ 7-10:
3. Արզումանյան Ն.Վ. Դաստիարակությունը և դեռահասության ճգնաժամի ընթացքը. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2013 , էջ 229 -232:
4. Արզումանյան Ն.Վ. Դեռահասության տարիքի ճգնաժամը և դրա հնարավոր բացասական դրսևորումները բանակում. Բանակ և հասարակություն, փողոցային արատավոր բարքերի դեմ պայքարի արդիական հիմնախնդիրը հոդվածների ժողովածու, Երևան 2014, էջ 111 -116:

АРЗУМАНЯННВАРДВАЗГЕНОВНА

ОБУСЛОВЛЕННОСТЬОСОБЕННОСТЕЙТЕЧЕНИЯПОДРОСТКОВОГОКРИЗИСАТИПОМТЕМПЕРАМЕНТА, АКЦЕНТУЦИЕЙХАРАКТЕРАИУРОВНЕМИНТЕЛЛЕКТАЛИЧНОСТИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.05 – «Психология развития и образования (педагогическая, возрастная, специальная)»

Защита диссертации состоится 11 ноября 2014 - годав 12:00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меци, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: подростковый возраст и кризисы являются одними из наиболее переломных этапов онтогенеза.

Обострение этого кризиса часто приводит к серьезным психическим и социальным проблемам.

Несмотря на это, причины обострения кризиса, внешние (в частности воспитание) и особенно внутренние (в частности, такие психические характеристики личности подростка как темперамент, акцентуация характера и интеллект) факторы, определяющие течение подросткового кризиса по-прежнему изучены в психологии.

Цель исследования является: изучение влияния типа темперамента, акцентуации характера и уровня общего интеллекта на течение подросткового кризиса.

Объект исследования: особенности течения подросткового кризиса.

Предметисследования: роль индивидуальных особенностей личности на течение подросткового кризиса.

Основной гипотезой исследования является предположение, что особенности темперамента, характера и интеллекта влияют на течение подросткового кризиса.

Задачиисследования: а/ осуществитьанализлитературыпопроблеме, б/ выяснитькакиеименноиндивидуальныехарактеристикиличностимогутвлиятьнатечениеподросткового кризиса, в/ исследоватьособенноститечениякризисауподростковсразнымитипамитемперамента, г/ проводитьэмпирическоеисследованиеповыявлениюсвязиакцентуациихарактерастечениемподросткового кризиса, д/ изучитьвлияниеуровняинтеллектанатечениеподросткового возраста.

Научнаяновизнаитеоретическаязначимостьисследования: выявлено, чтообострениюподросткового кризисаспособствуютвысокиеуровнинейротизмаиэкстраверсии, холерический, меланхохолерическийихолеросангвиническиетипытемперамента, наличиедвухакцентуацийхарактера, эксплозивныйтипакцентуации, уровеньинтеллектанижесреднего. Среднийуровеньтяжестикризисахарактернабивертам, сангвофлегматическомутипутемперамента, подросткамсдвумяакцентуациямихарактераисреднимуровнеминтеллекта. Легкоетечениекризисахарактернаподросткамстакназываемымнормальным (поГ.В. Суходольскому) темпераментом, однойакцентуациейхарактера,асреднимуровнеминтеллекта.

Практическаязначимостьисследования – Результатыисследованиямогутпримениться вобластипсихологическойдиагностики, консультированияипсихотерапииподростков, атакжелекционныхкурсовповозрастнойпсихологии.

Структураиобъемдиссертации – Работасостоитизвведения, трехглав, заключения, методическихрекомендаций, библиографическогосписка (104 источников) иприложений.

Вдиссертацииимеется 17 гистограмм и 2 таблицы. Объемдиссертации – 142 страницы.

Вовведенииобоснованаактуальностьтемы, представленыпредмет, объектисследования, степеньразработанностипроблемы, сформулированыцель, гипотеза, задачиисследования, раскрытынаучнаяновизна, теоретическаяипрактическаязначимостьработы, представлены методические и теоретическиеосновы,методы исследования, положения, выносимые на защиту.

Первая глава – «Проблемаподросткового кризисаиролыпсихологическихособенностейличностивпроцессепереживаниястресса»посвященаанализуподросткового возраста, какжизненногоэтапаонтогенеза, атакжелитературыпопроблеме.

Вовторойглаве - «Основныепсихологическиефакторыопределяющиетечениеподростковогокризиса» представленыосновныеисследованияфакторов, влияющихнатечениянодростковогокризиса, теоретическиеосновыисследования, логикаиметодыэмпирическогоисследования.

Втретьейглаве – «Эмпирическоеисследованиевзаимоотношенияиндивидуальныхособенностейподростковитечениякризисаэтоговозраста»представленыцель, задачи, этапыэмпирическихисследований, проанализированырезультаты.

Работазавершаетсяобщимивыводами.

Потемедиссертациионопубликованы 4 научныхстатей.

ARZUMANYAN NVARD VAZGEN

CONDITIONALITY OF ADOLESCENT CRISIS COURSE FEATURES BY TYPE OF TEMPERAMENT, CHARACTER ACCENTUATION, AND I.Q. LEVEL OF PERSONALITY

Dissertation for scientific degree of candidate of psychological sciences in speciality 19.00.05 Developmental and Educational Psychology (pedagogical, age, special).

The dissertation defense will be held on November the 11 of 2014 at 12:00 at the session of Special board of philosophy and psychology 064 HAC under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Address: 0010, Yerevan, st. Tigran Mets 17.

SUMMARY

Actuality of research. The adolescence and crisis of this age are one of the most critical periods of ontogenesis. The exacerbation of this crisis frequently results in serious mental and social problems. However, the reasons of exacerbation of crisis, external and especially internal (particularly, temperament, accentuation of character, intellectual characteristics of the personality of adolescents) factors determining the course of adolescence crisis are not investigated in psychology.

The Object of research: features of course of adolescence crisis.

The subject of research: the role of individual features of personality on course of adolescence crisis.

The purpose of research is: investigation of influence of temperament type, character accentuation and I.Q. on course of adolescence crisiss.

The general hypothesis of research is the assumption, that features of temperament, character and intelligence influence the course of adolescence crisis.

Research tasks: a/to carry out the analysis of the literature on a problem, b/find out which individual characteristics of the personality can influence the course of adolescents crisis, c/to investigate features of crisis course in adolescents with different types of temperament, d/to carry out empirical research on find out the relation of character accentuation to course of adolescence crisis, e/ to study influence of I.Q. on course of adolescence crisis.

Scientific novelty and theoretical significance of research: Is discovered, that the

exacerbation of adolescence crisis is promoted by high levels of neuroticism and extraversion, choleric, melanchocholeric and cholerosanguinic types of temperament, presence of two accentuations of character, explosive type of accentuation, I.Q. is lower than average. An average level of crisis acuteness is typical to beverts, sanguophlegmatic type of temperament, adolescents with two accentuations of character and an average level of intelligence. Mild course of crisis is is typical to adolescents with so-called normal (according to G.V.Sukhodolski) temperament, one accentuation of character, and an average level of intelligence.

The practical significance of research -Results of research can be applied in the field of psychological diagnostics, consultation and psychotherapy of adolescents, and also in lecture courses of developmental psychology.

The structure and amount of the dissertation - Dissertation consist of the introduction, three chapters, the conclusion, the bibliographic list (104 sources) and 3 appendices. In the dissertation there are 17 histograms and 2 tables. The amount of dissertation is 142 pages.

In introduction the actuality of the theme is proved, the subject and object of research, a contemporary state of the problem are submitted, the purpose, hypothesis and tasks of the research are formulated, scientific novelty, the theoretical and practical significance of research, empirical methods, and the theses which are submitted for defense are presented.

The first chapter– "The problem of adolescence crisis and the role of psychological features of personality during experience of stress" is devoted to the analysis of adolescence, as a vital stage of ontogenesis, and also the literature on problem of research.

In the second chapter – "The Basic psychological factors determining the course of adolescence **crisis**"are submitted the basic researches of the factors, influencing the course **of** adolescence **crisis**, theoretical bases of research, logic and methods of empirical research.

In the third chapter–" Empirical research of mutual relation of individual features of adolescents **and** course of crisis **of this age"**are submitted the purpose, tasks, stages of empirical researches, are analyzed the results.

Dissertation ends with the general conclusions.

On theme of the dissertation are published 4 scientific articles.